

բաղաճանալու իր ասածի բուն իմաստին: «Տա-
րան, մարդու գլուխը կերան» ասում է նա,
այսինքն՝ մարդուն տարան սպանեցին: «Ոնց
որ տեսնում եմ՝ դուք իմ գլուխը պտի ուտէք»,
այսինքն՝ մահուանս պատճառ պիտի դառնաք:
«Գլուխը սխտորեցին», այսինքն՝ սպանեցին:
«Գլխակեր», այսինքն՝ մէկի մահուան պատ-
ճառ: «Գլուխն աղբ դնել», «գլուխը խաշել»,
այսինքն՝ սպանել: «Գլխի միտը կերաւ», այս-
ինքն՝ ձանձրացրեց: (Եւայլն, եւայլն. տե՛ս
Ս. Վ. Ամատունի, էջ 136, 139, 143): Մեր
բարի տատերը ձկան գլուխը տան փոքրերին
են տալիս ուտելու, ասելով՝ «Ա՛ռ կե՛ր, որ
դո՛ւն իմ գլուխն ուտես, ո՛չ թէ ես քու՛նը»,
այսինքն՝ որ դո՛ւ ինձանից չստ ապրես:

Ի՞նչ խօսքեր են արանք եւ ո՞ր դարերից են
գալիս: Սրանք փոխաբերութիւններ չեն. սը-
րանք մարդակերութեան շրջանի մնացորդներ
են: Գուք տեսնում էք, որ մարդու գլուխն ու-
տում են, խաշում են, աղն են դնում, որ չհո-
տի, սխտոր են ցանում վրան: Հետաքրքրական
է յատկապէս «գլխի միտը կերաւ» բացատրու-
թիւնը, որ ձանձրոյթ է նշանակում: Անշուշտ
մի ձեռք կամ մի ոտը ուտելն աւելի արագ կա-
տարուող գործ էր, քան մի գլուխ ուտելը: Ոչ-
խարի գլուխը կարգին ուտելը մի վարպետու-
թիւն է, որ խաշի (քեալլա փաշա) սիրահար-
ները զիտեն: Բազմաթիւ մանր միկաններ կան
գանկի խոռոչների մէջ որ պէտք է խնամքով
համել: Իսկապէս մի երկար եւ ձանձրալի աշ-
խատանք: Ահա թէ ինչու «գլխի միտն ուտել»
նշանակում է ձանձրացնել: Գուցէ մեր այսօր-
ուան մամիկների նման՝ մարդակերութեան
շրջանի հասակաւորները մարդու գլուխը տա-
լիս էին երեխաներին, որ իրենց փոքրիկ մատ-
ներով աւելի լաւ կարող էին զանել մաքրել իր
միկաններից: Մարդու միտը լապիւրոց յետոյ
բնական է, որ ոսկորը նետում էին մի փողմ.
նետում էին եւ գանկերը, որ դառնում էին մե-
ծի եւ փոքրի խաղալիք: Կուտարկում ետանդը
սպառում էին թաւալելով գանկերը ոտով կամ
փայտով. հին օրերի Փուտրոլն ու մականախա-
ղը:

Ժամանակները փոխուցին. մարդակերու-
թեան շրջանն անցաւ. բարքերը մեղմացան:
Այլեւս «կոնոյ» չէին խաղում կամ «կոզոյի»
թաւալում: «Կոնոյ» դարձաւ դոնոյ կամ զըն-

դակ, գանկախաղը՝ զնդակախաղ, բայց բա-
ռերը գեռ պահում են այդ խաղերի բարբարոս
ծագման հետքը, իսկ ոճերը գեռ խօսում են
այդ շրջանի մասին:

* * *

Կարգանք այս ձեւով մի երկու բառ եւս:
Տեսանք որ ունինք թէ՛ կոզոյի եւ թէ՛ կոզոպ
ձեւերը: Տեսանք նոյնպէս, որ այդ բառը նշա-
նակում է նաեւ սակառ, տուփ: Արդ՝ այստե-
ղից է կարծում եմ կոզպի բայը, իբր կոզո-
պել: Անկատկա՞ր բառի առաջին վանկն էր չեչ-
տուած իբր կոզոպել, որի հետեւանքով երկ-
րորդ վանկի ուն նախ աղած է տարով կոզոպել
ձեւը, վերջը չքացած է եւ բային տուած կոզ-
պել կերպարանքը: Ժամանակի ընթացքին այս
վերջին ուն եւս սղած է եւ արեւմտեան բար-
բառների մէջ մենք ունինք կզպել: Իր նախնա-
կան իմաստն անշուշտ եղած է կոզոպի, այս-
ինքն՝ կոզովի մէջ դնել, յետոյ կոլովի, այս-
ինքն տուփի մէջ դնել՝ երբ հնարել են կախա-
րիչով փողովները, որ նախնական տուփերն են.
վերջը վախան հնարելով՝ պարզ փողովներ
դարձած է փակել, կոզպել: Եւ արդէն փակե-
լու նախնական իմաստն է անշուշտ փակը,
այսինքն կախարիչը վրան դնել. եւ փականը
նախապէս պիտի նշանակէր փակող, ինչպէս
կծանը նշանակում է կծող. յետագային միայն
փականն ասացել է կոզպելի իմաստ:

* * *

Իսկ կոզոպո՞ւտը. արդեօք սա կապ չունի՞
մեր «կոզոպ»ի հետ: Կարծում եմ, որ ունի եւ
բաւական սերտ կապ: Նախ ձեւը: Կոզոպուտ
բառը կազմուած է այնպէս, ինչպէս մացա-
ռուտ, կաղնուտ, հացուտ. վերջինը չստ հին
բառ: Փաւստոս գրում է. «Ի սակաւ անտառա-
կին, ի հացուտ պուրակին (Գ. ԺԴ): Այդ բա-
ռերը մատնանշում են վայրեր, ուր խումբ-
խումբ մացառներ կան. անտառի այն մասերը,
ուր խմբով բուսած են կաղնիներ, հացիներ:
Ուրեմն «կոզոպուտ» նշանակում է «կոզոպների
խումբ», գանկեր, գլուխներ:

Ս. Գրքի կոչումները ուշադիր կարգաւով,
եւ չգտայ մի վկայութիւն, որից երեւար թէ
«կոզոպուտ» նշանակում է գանկեր: Համեմա-
տելով մեր թարգմանութիւնը յոյն բնագրի
հետ՝ նկատեցի, որ կոզոպուտը մեծ մասամբ